

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՑՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՃԻՇԴՈՐԸ
ԸՍՏ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ:

Հայաստանեայց ս. եկեղեցին, ինչպէս յայտնի է, Քրիստոսի ս. ծննդեան և Վերդարութեան յիշատակները միացնելով տօնում է իրրեւ մի Աստուածայայտնութեան տօն յունուարի 6-ին, մինչդեռ բոլոր միւս եկեղեցիները այդ երկու տօները իրարից բաժանում են և առաջինը կատարում են գեկտեմբերի 25-ին: Արարատի ներկայ Համարին իրրեւ յաւելում Հրատարակում ենք մի քաղաածոյ այն վկայութիւնների, որ մեր Հայրերը բանակաւ մէջ գործ էին դնում իրենց եկեղեցւոյ Հնաւնդ սովորութիւնը օտարների դէմ՝ պաշտպանելիս: Քննադատական ստոյգ պատմութիւնը Հաստատում է, որ արդարեւ իրաւունքը նոցա կողմն էր և որ մենք Յունուարի 6-ին Յայտնութեան տօն կատարելով՝ հետեւող ենք Հանդիսանում մինչև Դ. դար ընդհանուր եկեղեցւոյ մէջ ընդունուած մի աւանդութեան:

Զարմանալին այն է, որ Կղեմէս Աղէքսանդրացու * վկայութեան նայելով առաջին անգամ Քրիստոսի մկրտութեան տօնը կատարել են Բ. դարում Բաղլիկեան աղանդաւորները: Յամենայն դէպս այդ դարու վերջերից սկսած յայտնի է, որ արեւելեան եկեղեցիները տօնում էին յունուարի 6-ին Յայտնութեան տօնը, գլխաւորապէս ի յիշատակ Փրկչի իւր մկրտութեամբ իրրեւ Մեսիա յայտնուելուն, բայց ոչ առանց ի նկատ առնելու նաեւ հորա առաջին յայտնութիւնը Կուսական ծննդեամբ: Ասկայն այդ երկրորդ նշանակութիւնը հետզհետէ այնպէս գերակշռող դարձաւ, որ Դ. դարում եկեղեցական Հայրերը, ինչպէս օրինակ երեք մեծ Կապադովկացիք (Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Աստուածաբան և Գրիգոր Նիսացին) և ս. Յովհան Ոսկեբերան յայտնութիւն ասելով աւելի Քրիստոսի ս. ծննդին են հասկանում: Ուստի և ս. Բարսեղ, ինչպէս յիշեալ քաղաածքի մէջ ըրելուած վկայութիւնից երևում է, աւելի յարմար է անհում յունուարի 6-ի տօնը Աստուածայայտնութեան տօն անուանել, որովհետեւ այդ օրը Աստուած յայտնուում է ի մարմնի, յայտնուում է յատկապէս մոգերին լուսաւոր աստղի միջոցաւ:

Արեւմտեան եկեղեցիների նկատմամբ յիշատակութիւն չկայ, որ Դ. դարից առաջ

նորա Յայտնութեան տօնը կատարած լինին, բայց այդ դարում արդէն ամէն տեղ կատարում էին: Առաջին անգամ Հռոմի լիբերիոս եպիսկոպոսն եղաւ, որ 352 թ.-ին Կիստի վերայ բաղմելով՝ սկսեց տօնել յունուարի 6-ը, հաւանականաբար սկզբում իրրեւ Յայտնութեան տօն ծննդ և Վերդարութիւն միասին, բայց 354 թ.-ին ժամանակագիրների միաձայն վկայութեան համաձայն 2 տօները բաժանուեցան և գեկտ. 25ը մնաց այնուհետեւ իրրեւ յիշատակ Քրիստոսի ս. ծննդեան: Եւ որովհետեւ Հռոմն այդ ժամանակ Նիկիական դաւանութեան ամենաթեմը պաշտպանն էր, որին ապաւինել էր ի թիւս այլոց ս. Աթմասն Հռոմի եկեղեցւոյ այս սովորութիւնը մօտ գործեց նաեւ արեւելեան եկեղեցիների մէջ այն ժամանակ, երբ Նիկիոյ դաւանութիւնը յաղթող Հանդիսացաւ և նորա գլխաւոր ջատագովներից մէկը՝ Գրիգոր Աստուածաբան տօնեց գեկտ. 25-ը Կ. Պօլսում 379 թ. ին:

Թէ ինչն է եղել այս վերջին տօնի ծագման իսկական պատճառը՝ այդ մասին այլ ևս գրեթէ կասկած չկանել չի կարող: — Հռոմում Կոստանդին Մեծի և նորա որդիների օրով դեռ տօնուում էին հեթանոսական սատուրնալիան տօները գեկտ. 17—24 ին, երբ հարուստ և առքաւորի մէջ եղած խորութիւնը վերանում էր և ընդհանուր ուրախութեամբ կատարում էր Ոսկեդարի յիշատակը: Իսկ վերջին օրը երեխաներին կաւէ, մօմէ, խմորէ պատկերներ և պանուծապատաններ էին բաշխում: Գեկտեմբ. 25-ը արեգակի օրն էր, որ Բրոմալիա էր կոչուում և որի հետ իւր նշանակութեամբ կապուած էր հռոմէական նոր տարուայ տօնը: — Յայտնի է, թէ ինչպէս եկեղեցւոյ առաջնորդները աշխատում էին ժողովրդի համար սիրելի և նուիրական դարձած այսպիսի տօներ քրիստոնէական գաղափարներով սրբագործել և պահպանել, հեթանոս մարդկութիւնն այսպէս աննկատելի կերպով նոր կրօնին ընտելացնելով: Իսկ ինչ կարող էր լինել աւելի խորհրդաւոր, քան աշխարհի Փրկչի ծննդը, փրկութեան Արեգակի ծագումը՝ կապել այն օրերի հետ, երբ արեւագարձը տեղի է ունենում և տարին նոր շրջանաւարտութիւն է սկսում: Արդէն Լիբիւս Աստրին մի առանձին խորհուրդ էր նկատում այդ հանգամանքի մէջ, որ Քրիստոս արեւագարձից 13 օր յետոյ է ծնուել: Հասկանալի է ուրեմն թէ ինչու լիբերիոսի նորմաւութիւնը այնպէս շուտով ընդհանուր ընդունելութիւն գտաւ՝ մանաւանդ եթէ ի նկատի ունենանք,

* Չախժ. մօտ 220 թ.-ին:

որ այդ տօնը նպաստում էր առանձին շուքով հանդէս բերելու ժամանակակից դաւաճանական վէճերի գլխաւոր խնդիրը մարդեղութեան ու խորհուրդը: Բայց մեր եկեղեցին նախնական սովորութեան հետեւելով ոչ միայն իւր հարադատ և աւանդապահ լինելըն է ցոյց տալիս, այլ շարունակում է պահպանել այն խորհրդաւոր կապը, որ կայ Քրիստոսի ու ինչպէս և Մկրտութեան իբրեւ մեր փրկի կրկնակի յայտնութեան մէջ, և շատ աւելի վսեմ է, քան հեթանոսական գաղափարներից վերցուած որեւէ խորհուրդ:

Մեր հրատարակած քաղաքացիական արտագրուել է Մայր աթոռի մատենադարանի «Թղթոց գիրք» կոչուած մի ձեռագրից*, որի գրելը «հէք Մաթէոս» ամէն ինչպէս ինքն յիշատակարանի մէջ ասում է, սկսել է իւր գործը Պէն թիւ և վերջացրել Զին-ին: Այս կարեւոր և բաւական ստուար ձեռագիրը պարունակում է իւր մէջ մի շարք ուշագրութեան արժանի դաւանարանական գրուածներ և ի թիւս նոցա մի քանի այսպիսի վկայութեանց ժողովածուներ: Արմենը կաշխատենք հետզհետէ հրատարակել: Միջոց չունենալով ներկայ հրատարակութեան բոլոր հատուածների արժէքը մի առ մի մանրամասն որոշելու մենք կ'իշենք միայն, որ նորանից երկուսը (ամենահինները եթէ վաւերական լինէին) տպուած են արդէն Պիտրա ծիրանաւորի ժողովածուների մէջ: Բայց ներկայացնում են այստեղ մի քանի տարբեր և ոչ անհետաքրքիր ընթերցուածներ (օր. և ար. փոխանակ և տրեղիս): Այցանից արդ. դարու նշանաւոր գիտնական և Հռոմի հակաթոռ եպիսկոպոս (թէ և իբրեւ նահատակ սրբոց կարգը դասուած) Հիպոլիտ եպիսկոպոսին է ընծայուում բայց անհարադատ է անշուշտ**, ք. ք. որ հաւանականաբար նոյնպէս անհարադատ է, վերագրուել է Բ. դարու փոքր Ասիայ ամենանշանաւոր եկեղեցականներից և իբրեւ փիլիսոփայ քրիստոնէութեան այսի բնկնող ջատագովներից մէկին՝ Սարգէսի Մելիտոս եպիսկոպոսին: Վիպրիանոս եպիսկոպոսի անունով յիշուած վկայութիւնն էլ առանձին ուշագրութեան

արժանի կ'լինէր, եթէ նորա հեղինակը Գ. դարու կարթագենի նշանաւոր Վիպրիանոս եպ. ք համարուէր: Բայց սա երեւի այն Անկիւրիոյ Վիպրիանոս եպ. ն է, որի անունով մի «Պորփուրեան ձագ» կայ պահուած մեր ձեռագիրներում*: Հետաքրքիր էր նոյնպէս իմանալ, թէ ով է այն Սահակի Աֆրեմ՝ տնորի վարդապետը, որ գիտէ այնպէս ուղիղ գեկա. 25-ի տօնի ծագումը որոշել: Բայց ամենահետաքրքիր և մանրաքնին հետազոտութեան արժանի խնդիրն այստեղ այն կէտըն է, որ ակնարկում է կոմիտաս կաթողիկոսին վերագրուած հարցաքննութեան և Ստեփաննոս Սիւնեցու Անտիոքի պատրիարքին ուղղած թղթի մէջ: Եթէ վերջինս ք. դարում էր ապրում, ** միթէ նորա ժամանակ հայերը զեռ Աւետեաց առանձին տօն չէին կատարում և միթէ ցարթիւնը կամ Աւետումը ապրելի 6-ին էին սեղի ունեցած համարում որ այդ երկու տօների խորհուրդը միացնել կարելի լինէր:



ՌՈՒԾԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՐԿՈՒԼԻ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՐԸ.

Ռուսաց եկեղեց. Համբաւարեք թերթի 1895 թ. 51—52 համարում մի նոր յօդուած է լոյս տեսել «Հայոց եկեղեցու օրթոդոքսութեան հետ ունեցած յարաբերութեան հարցի» նկատմամբ վերնագրով, որի նպատակն է լրացնել անցեալ թուական «Արարտի» յուլիսամսուայ համարի մէջ նոյն թերթից բերուած յօդուածի իմաստը: Կոչուող հեղինակը Հռոմի պապի ներկայումս եկեղեցիներ միացնելու մասին գործ գրած եռանգուն ջանքերը իբրեւ նշան ընդունելով, «որ այդ հարցը վճռելու կարիքը բաւականաչափ հասունացել է քրիստոնէական աշխարհի դիտակցութեան մէջ», և իսկ ինքն է համարում չգրադուել այդպիսի ժամանակակից հարցերով և առանձին ուշագրութիւն չգործել, ի թիււրս այն եկեղեցիների, որոնք նորա կարծիքով «ամբողջ դարերի ընթացքում օրթոդոքս եկեղեցու մարմնի անբաժան անդամներն են եղել», մասնաւորապէս Հայոց եկեղեցու վերայ, առանց ի հարկ է բացատրութիւն տալու թէ արդեօք քրիստոնէական աշխարհի զգացած միութեան կարիքին ուղիղ արտայայտութիւն են այնպիսի ջանքերը, որպիսին Հռոմի քահանայապետն է անում, և թէ ինքն այդ

* Այս հեղինակի բոլոր գրուածները մի նոր հրատարակութիւն է պատրաստուում Բոնդեւ և Հ. Ախեմէս Նրիտասարդ գիտնականների ձեռքով, որոնց համար առիթ է մ ունեցել հայերէն տպուած այս եւ մի քանի ուրիշ հատուածներ կրկին թարգմանել:

** Գէորգեան ժողովածուի հ. 95. էջ 151 շջ. — 155:

* Հարանալեւան — Թարգմանութիւնը. 1889. եր. 502.

** Նոյն — Հայկական հին Դարութիւն 1886. եր. 47 չ.